ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2024 թվականի հուլիսի 4-ի ժամը 11:00-ի նիստի
N 13 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Դոցենտի գիտական կոչում հայցելու նպատակով գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը մասնակցելու համար **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի ընդհանուր տնտեսագիտության և բնագիտական առարկաների ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու Արփինե Դավիթի Սարգսյանի**՝ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարին ուղղված դիմումի մասին հարցը:

Զեկուցող՝ գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի անդամ, հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Մ.Վ.Բաղալյան**:

Զեկուցողը նշեց. Ա.Դ.Սարգսյանը 2016 թվականի սեպտեմբերի 1-ից առ այսօր աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի վարչական կազմում. նախ՝ զարգացման ծրագրերի և արտաքին կապերի մասնագետ, գիտական խորհրդի քարտուղար-տնօրենի տեղակալ, իսկ 2021 թվականի մարտի 1-ից՝ հետազոտությունների և զարգացման բաժնի պետ (1,0 դրույք): Միաժամանակ՝ 2018 թվականի սեպտեմբերի 1-ից առ այսօր ներքին համատեղության կարգով դասավանդում է ընդհանուր տնտեսագիտության և բնագիտական առարկաների ամբիոնում (0,5 դրույք): Վերջին 3 ուսումնական տարվա ընթացքում անընդմեջ իրականացրել է հայցվող գիտական կոչման մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն:

Ա.Դ.Սարգսյանը ծնվել է 1994 թվականի փետրվարի 11-ին Գյումրի քաղաքում: 2010 թվականին ընդունվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղ՝ «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մասնագիտությամբ, որն ավարտել է 2014 թվականին՝ ստանալով տնտեսագիտության բակալավրի աստիճան: Նույն թվականին ընդունվել է Գյումրու մասնաճյուղի մագիստրատուրա՝ «Ֆինանսներ» մասնագիտությամբ, որն ավարտել է 2016 թվականին ստանալով ֆինանսների մագիստրոսի աստիճան: 2017-2021 թթ. Գյումրու

մասնաճյուղի ընդհանուր տնտեսագիտության ամբիոնում ձևակերպվել է հայցորդ Ը.00.01՝ «Ընդհանուր տնտեսագիտություն» մասնագիտությամբ:

2022 թվականին Ա.Դ.Սարգսյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ՀՀ ԲՈԿ-ի (ներկայում՝ ԲԿԳԿ) կողմից նրան շնորհվել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: Նա հրատարակել է 18 գիտական աշխատանք: Թեկնածուական ատենախոսություն պաշտպանելուց հետո տվյալ բնագավառում ունի հրատարակված ինչպես գիտական, այնպես էլ ուսումնամեթոդական աշխատանքներ, որոնց ընդհանուր թիվը 5 է (1 մեթոդական ցուցումներ, 3 գիտական հոդված՝ տպագրված ՀՀ գիտական ամսագրերում, 1 գիտական հոդված՝ տպագրված միջազգային գիտական ամսագրում՝ համահեղինակությամբ):

Ա.Դ.Սարգսյանը 08.02.2024 - 31.05.2024 հրավիրյալ պրոֆեսոր-հետազոտող է եղել Սենֆորդի հանրային քաղաքականության դպրոցում (Դյուկի համալսարան, ԱՄՆ), 01.09.2023 - 30.11.2023 գրախոս՝ CSEI2023 (Computational Science and Engineering International Conference 2023), 01.05.2023 - 01.07.2023 այցելող հետազոտող՝ LICOS ինստիտուցիոնալ և տնտեսական հետազոտությունների կենտրոնում (KU Leuven, Բելգիա): Մասնակցել է մասնագիտական, մեթոդաբանական, SS և այլ ոլորտներին վերաբերող տեղական և միջազգային վերապատրաստման մի շարք դասընթացների ու գիտաժողովների (Իզմիրի համալսարան (Թուրքիա), Ֆլորիդայի համալսարան (ԱՄՆ), Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ (Կվարելի, Վրաստան), Erasmus + ծրագրի շրջանակներում՝ Պորտոյի համալսարան (Պորտուգալիա) և Միշկոլցի համալսարան (Հունգարիա) և այլն) և արժանացել է մի շարք պատվոգրերի:

Ա.Դ.Սարգսյանն ակտիվորեն մասնակցում է ամբիոնի աշխատանքներին, դասախոսություններն ու գործնական պարապմունքները վարում է տեսական ու գործնական բարձր մակարդակով՝ հաշվի առնելով ժամանակակից մեթոդների կիրառման առանձնահատկությունները: Ունենալով մարդկային բարձր որակներ, վայելում է գործընկերների և ուսանողների հարգանքը:

Գյումրու մասնաճյուղի գիտական խորհուրդը և գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովը (կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0) երաշխավորել են Ա.Դ.Սարգսյանին մասնակցելու Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը դոցենտի գիտական կոչում հայցելու նպատակով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Դոցենտ Ա.Վ.Գրիգորյանը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գիտական խորհուրդը որոշեց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի ընդհանուր տնտեսագիտության և բնագիտական առարկաների ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու Արփինե Դավիթի Սարգսյանի թեկնածությունը դնել գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը դոցենտի գիտական կոչում հայցելու համար (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. կողմ՝ 47, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Քվեարկության արդյունքներն են. գիտական խորհրդի 60 անդամից նիստին ներկա էին 47-ը, քվեարկությանը մասնակցել են 47-ը: Փակ գաղտնի քվեարկության արդյունքներն են. կողմ՝ 46, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթիկ՝ 1:

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1. Հաշվի առնելով, որ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի ընդհանուր տնտեսագիտության և բնագիտական առարկաների ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու Արփինե Դավիթի Սարգսյանի** կատարած գիտամանկավարժական աշխատանքը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հուլիսի 9-ի N 615 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի» 2-րդ գլխի 5-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներին՝ **Արփինե Դավիթի Սարգսյանին** շնորհել **դոցենտի** գիտական կոչում **«Տնտեսագիտություն»** բնագավառի **Ը.00.01՝ «Տնտեսագիտության տեսություն և տնտեսագիտական մտքի պատմություն»** մասնագիտությամբ:

2. Միջնորդել Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեին՝ հաստատել համալսարանի գիտական խորհրդի որոշումը:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ա. Հ. Գրիգորյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ա. Դարբինյան**

2024 թ. հուլիսի 4
Երևան